ի քաղաքն Հալէպ. ի թվին ՌՃՁԶ.ին (= 1737) Հոկ. ԺԸ.ին և Ծ. օր Հալապ Զըխրլի խան նստայ. յետոյ գնացի Դամասկոս, որ և ուխտեմ անտի ի սբ քաղաքն Երուսաղէմ գնամ և խըստէթ լինի ամէն քրիստոնէից և այս ճաշոց գիրքն բացում անգամ ընթերցայ-գրողաց և յիշատակ տվողաց... մին, Հայր մեր և մին յողջոյն ասացի։» (Հաղբատի Ձեռ. թ. 136)։

ԵՐԵՄԻԱ ԶԷԼԷՊԻ ՀԱՄԹԵՑԻ.— Որդին Մաղաքիա Զէլէպի, թոռն Գասպար Զէլէպի. 1649ին Պոլիս կը փոխադրուի ընտանեօք, վէզիր Ահմէտ փաշայի հետ, որուն սիրելի եղած էր. կ'ազատէ իր ազդեցութեամբը քսան եւ հինգ հայ թիապարտները, կը վախճանի 1649 ին կամ 1650 ին եւ կը թաղուի Պալըգլիի գերեզմանատունը. (Թծաց. էջ 50,)։

Երեմիա Զէլէպի Ս. Յակոբի վանքին յիշատակ թողած է ոսկեկուռ խաչ մը և մէկ ոսկի սկիհ մը, իբր նուէր յիշատակի (ՄՁ. թ. 532). իր մասին տեսնել նաեւ (Թորոս Աղբար, Բ. էջ 397)։

ԵՐԵՄԻԱ ԶԷԼԷՊԻ ԲԷՕՄԻՐՃԵԱՆ, ՊՈԼՍԵՑԻ.— Ծ. 1635ին. որդի Մարտիրոս քհ.ի, որ Նարվէրցի մահ. Ամբակումի քրոջ աղջկան հետ ամուսնանալով՝ Երուսաղէմի Գրիգոր Պարոնտէր պատրիարքէն քահանայ ձեռնադրուած էր Ս. Յակոբի մէջ. իր անդրանիկ որդին էր Երեմիա Զէլէպի. որ յետոյ որդեգիրը եղաւ իր մօրեղբօրը (Թորոս Աղբար Բ. էջ 403)։ Ուխտաւորութեամբ Ս. Յակոբի վանքը կ'այցելէ նախ մօրը քեռի մահ. Ամբակումի և Դարանաղցի Գրիգոր վրդ.ի եղբօր Մարկոսի հետ. ՌՂԸ (= 1649) թուին, ըստ Տարեգրական պատմութեան Երեմիա Զէլէպիի, այս ուխտաւորութեան կ'ընկերանային Պոլսի վեց եկեղեցիներէն 90 անձեր, որոնց գլխաւորներն էին Բիսիհի Զիրամը Քիրեսիհի Մուրատը, Խոսավիրցի Ղազարան, Էրմիհի Կիրակոս, Շեհիրի Տէր Գրիգոր, Տիվրիկցի Տէր Բարսեղ եւ Խաս-գեղցի Տէր Ղազար (Եր. Ձեռ. Որ.)։ Զէլէպին Բ. անգամ Ս. Յակոբի վանքը կ'այցելէ Բերիայէն, Եղիազար կթղ.ին շփոթները հանդարտեցնելու համար 1664 ին, եւ կը մնայ մինչեւ 1666 եւ կը դառնայ Պոլիս. (Զամչ. Գ. էջ 702). 1685ին ալ ուղևորած է Էջմիածին. Եղիազար կթղ.ի և Մարտիրոս Դրիմցիի պայքարներու մասին Երեմիա Զէլէպիի միջամտութեան մանրամասնութիւնները տեսնել